

Կանոնավոր և անկանոն կոտորակներ

Համարիչ հայտարար

Այն կոտորակը, որի համարիչը փոքր է հայտարարից անվանում ենք կանոնավոր կոտորակ:

Օրինակ՝ $\frac{5}{8}$ կոտորակը կանոնավոր է, քանի որ $5 < 8$:

Այն կոտորակը, որի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան անվանում ենք անկանոն կոտորակ:

Օրինակներ՝

$\frac{7}{5}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 > 5$

$\frac{7}{7}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 = 7$:

Առաջադրանքներ՝

Իրարից առանձնացրեք կանոնավոր և անկանոն կոտորակները.

$\frac{9}{5}$, $\frac{7}{14}$, $\frac{16}{15}$, $\frac{7}{18}$, $\frac{117}{25}$, $\frac{789}{855}$, $\frac{7}{3}$, $\frac{27}{35}$, $\frac{171}{95}$, $\frac{79}{95}$, $\frac{56}{65}$, $\frac{11}{11}$

Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

կանոնավոր կոտորակ

$\frac{*}{9}$, $\frac{*7}{34}$, $\frac{1*6}{215}$, $\frac{127}{1*8}$

Անկանոն կոտորակ

$\frac{*9}{19}$, $\frac{*47}{314}$, $\frac{2*6}{215}$, $\frac{127}{1*7}$

Համեմատեք.

$$\frac{7}{34} \text{ և } \frac{8}{3}$$

$$\frac{27}{4} \text{ և } \frac{82}{94}$$

$$\frac{9}{34} \text{ և } \frac{8}{7}$$

$$1 \text{ և } \frac{3}{4}$$

$$1 \text{ և } \frac{4}{3}$$

$$1 \text{ և } \frac{6}{6}$$

Արտահայտիր նշված միավորներով՝

$$\frac{8}{5} \text{ դմ} = \text{ սմ}$$

$$\frac{4}{10} \text{ մ} = \text{ սմ}$$

$$\frac{6}{10} \text{ սմ} = \text{ մմ}$$

$$\frac{4}{25} \text{ կգ} = \text{ գ}$$

$$\frac{4}{15} \text{ ժ} = \text{ ր}$$

Խնդիր1.

Մայրիկը իր պատրաստած գաթայի $\frac{1}{5}$ -րդ մասը տվեց Արմենին, $\frac{2}{5}$ -րդ մասը՝ Դավիթին, իսկ մնացած մասը՝ Սերգեյին:

Ո՞ւմ բաժինն էր ամենաշատը:

Խնդիր2.

Ավտոմեքենան պետք է անցնեք 150 կմ ճանապարհ: Նա մինչև կեսօր անցավ ճանապարհի $\frac{3}{5}$ -րդ մասը: Որքա՞ն ճանապարհ նրան մնաց անցնելու:

Խնդիր3.

Ամբողջ ճանապարհի $\frac{3}{4}$ -րդ մասը անցնելուց հետո n° ր մասը կմնա անցնելու:

Խնդիր4.

Գիրքն ունի 280 էջ: Գայանեն կարդաց գրքի $\frac{3}{5}$ -ը: Քանի՞ էջ մնաց կարդալու:

Լրացրու բաց թողնված բառը(բառերը):

- Եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա այդպիսի կոտորակն անվանում են կոտորակ:
- Եթե կոտորակի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան, ապա այդպիսի կոտորակն անվանում են կոտորակ: